կախկլբերդ, Ասմէկ եւ Արաւետի[1] լեռները: Կխկլմին եւ Թորդումին բաժանում են Աշմուչէն, Գերվանց, Հարկեւոր, Բէջիգին, Մեղրեր, Խախամին, Աղաջ-քլլխսէ (Եկեղեաց) լեռները: Հովտիկն ու Թորդումը բաժանում են Կաղան-Բալլի լեռները: Կարնոյ եւ Թորդումի ջրբաժան գիծը Կուչկուչլար եւ Դումլու լեռներն են:

Թորդում վտակի ակունքը Ջինակեր գեղը հասնելուց յետոյ ուղղւում է արեւելա-հիւսիս, ոռոգում է Քաբանցեց (Քարընկէց), Գասիրիկ, Պուչենց, Սաղիր գեղերը եւ ապա հասնում է Թորդում աւանը, որը գաւառի կասաբան է (Վարչական մարմնի ոստանը): Այս աւանում 480 տուն Իսլամ բնակութիւն կար պատերազմից առաջ, որի

կամ թէ այս խօսը Ակկատների կամ Լարսայի արեւ Դից խօսարին չի՞ յիշեցնում: Գիւլի-Բագդաս Լ-րի արեւելեան փեշերից իջնում է Թեւ կամ Դեւ առուակը, որ նախ ոռոգում է Խաչըխա գեղը: Խաչըխա՝ Օթխայի ձեւով կազմուած է, — Թխա վերջին վանկը ուշադրութիւն է գրաւում՝ որդեօք սա էլ նոյն աստուածութեան մի այլ պատկերը չի՞ ներկայացնում: Մանաւանդ վտակի Դեւ (Թեւ) անունը ստիպում է մտածել, որ այս գետերը նախապատմական շրջանի պաշտամունքի առարկաներն են եղել:

1 Արաւետ տանից աւելի գեղերի, վտակների, լեռների անուն է Ճորոխի Աւազանում, որ ցոյց է տալիս, թէ այդ վայրերում Արեւի յատուկ պաշտօնատեղիներ են եղել: Արաւետները մեխրապաշտութիւնից վաղ են հիմնուել մեր երկրում եւ պիտի զուգընթաց լինի կենսատու ջրի պաշտամունքի հետ: Արամազդը, Անահիտը եւ Միհր դիք միաժամանակ երրորդութիւն են կազմել մեր երկրում եւ սրանց պաշտամունքը Ճորոխի Աւազանի ամէն մի կողմը ակնբախ է: